№ 105 ՀԻՆԳՇԱԲԹԻ 16 ՄԱՅԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 16 ՄԱՅԻՍԻ № 105

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. Նամակագրողմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԱՔՐՔԻՐ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Գովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնայում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ծրիւարար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ շարունակութիւնը

Նշանակված է շաբաթ, մայիսի 18-ին, երեկոյեան ժամը 7½-ին Ընկ. դահլիճում (Աբասաբադեան հրապարակ, № 7 ս. տ.).

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.

1) Ընտրութիւն 2 անդամի «Ընդհանուր-նպաստեան» գրական ֆոնդի յանձնաժողովի:
2) Ընտրութիւն ուսուցչական ֆոնդի յանձնաժողովի անդամների:
3) Խուզադեան որբանոցի վիճակագրման հարցը:
4) Ընտրութիւն խորհրդի 4 անդամի՝ հերթով հեռացող բժ. Մխիթարեանի, Ս. Վասիլեանի և Ի. Ղեսկամ հրաժարված եփեմ եպիսկոպոսի և Զ. Մամուլեանի փոխարէն, 1 փոխ-անդամի, վերաստուգիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ-անդամի:
5) Ընթացիկ հարցեր:

Այս ժողովը լինելով նախընթաց ժողովի շարունակութիւն՝ կը կայանայ որքան որ անդամ ներկայ լինի:

(2.) առ. 386. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ

Շաբաթ, մայիսի 18-ին, 1913 թ.

ՓՈԽԱԴՐՎՈՒՄ Է

ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ:

(2.) առ. 388. 2 - 1

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՈՎ.ԿԱՌՈՒՈՒՆ. ԸՆԵԵՐՈՒԹԻՒՆ.

Շաբաթ, մայիսի 18-ին

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ ԿԸ ԿԱՅԱՆԱՑ ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ

անուան հետեւեալ ծրագրով.

I

Սայաթ-Նովայի երգերը կերգեն աշըղ-Հաղբին իր խմբով և ընկեր աշակերտներով:

II

Նոյն խումբը կը կատարի արեւելեան երգեր և եղանակներ, սօլօնուագ և խմբական: Սայաթ-Նովայի երգերից կարտասանեն պ.պ. Ն. Աղաջանեան, Գ. Բաշինջաղեան, Ց. Թումանեան, Ն. Ցարոյ, Ա. Քալանթար և ուրիշները: Աշուղական մրցութիւն (բաս մանել). յաղթողը կը ստանայ ընդունված նուէրը:

III

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՐԵՐ ՀԻՆ ԹԻՖԼԻՍԻ ԶԳԵՍՏՆԵՐՈՎ.

Բեմը արեւելեան ճաշակով կը զարդարէ նկարիչ Գ. Բաշինջաղեանը:

Վարչութիւնը խնդրում է հասարակութեան՝ ով կարող է թող շնորհ բերէ երեկոյթին Թիֆլիսի հագուստներով:

Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին:

Տեղերի գնները. I կարգ 3 ր. 10 կ.—II կարգ 2 ր. 60 կ.—III և IV կարգ 2 ր. 10 կ. V—VIII կարգ 1 ր. 60 կ.—IX—XII կարգ 1 ր. 35 կ.—XIII—XV կարգ 1 ր. 10 կ. Կանգնելու տեղերը 75 կ., իսկ աշակերտների համար 55 կ.: Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Թիֆլիսի ժողովարանում և Ե. Ծատուրեանի մագազինում:

Երեկոյթի կառավարչուհի՝ Իշխ. Մարիամ Թումանեան

(ա. օ.) առ. 389. 3—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ

Ժողովրդ. ներկայացումներ կազմակերպող

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԿՍԾԻՆ

ԱՅՍՕՐ, հինգշաբթի, մայիսի 16-ին

Գ. ՓԻՐՈՒՄԵԱՆԻ ԵՐԵԿՈՅ

Հայոց Դրամ. Ընկ. Թատերասէրների խումբը ՄԱՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ կը ներկայացնէ

I

ՄԻՋԻ ՄԱՐԴ

կոմեդիա 4 արար. հեղ. Մ. Պատկանեանցի

II

ԽԵԼՔԻ ՏՈՊՐԱԿ

Վոդեվիլ 1 գործ. թարգ. Ա. Թումանեանի

Մասնակցում են. տ. տ. Մանուչարեան, Մարգարեան, Ցատիկ, Սաթենիկ, օր. Թարխանեան, Փիլիթաքեան, պ. պ. Գալստեան, Եբրամեան, Մարկոսեան, Ցարութիւնեան, Ցարութիւնեան II, Սարեան, Տէր-Յովհաննիսեան, Փիրումեան և ուրիշ.:

Սկիզբը ժամը 8½-ին:

Հերթապահ կարգադրիչներ՝ ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆ, ԳԱԼՍՏԵԱՆ և ԹՈՒՄԱՆԵԱՆ

առ. 387. 1—1

ԲԺԻՇԿ

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ

Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:

Հասցէն՝ Բարիշէվսկայա № 1.

առ. (կ. ե. հ.) 4. 100—54

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բարիշէվսկայա 13, տէլէֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով:

Ընդունելութիւն կանացի, ներին և մանկական իւանդութիւն ունեցող երթեւեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը:

Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուքբօտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը:

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Ցարութիւնեան, Ն. Ն. Վասիլօվզօրով, Վ. Ա. Զակրժէվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նօվիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ռամիկեան, Ա. Ռ. Փիշէր, Ս. Պ. Շահպարոնեանց: Կոնսուլտանտ՝ պրոֆեսսոր Մ. Ս. Սուքբօտին:

(հ.կ.) առ. 779. 100—54

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. Յ. ԳԱՐԱԿԻԻԼԵԱՆ

(Նախկին օգնական Կամայեվի)

Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը

Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—1½-ը և երեկ. ժ. 4—7-ը

Վլադիմիրսկայա փողոց № 4, բն. 3.

առ. (օ.մ.) 129. 50—35

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
357. 50—4 (5. 4.)

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի: Բժշկութիւն նաեւ ՏՈՒՐԲԵՊՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ԲՐԴԻՒ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԵՎՄՈՏՈՐԱԿՈՎ:

Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը:

Զբաւորներին առ. ժամը 9—10-ը Ճրիաբար:

Սօլօլակ, Բէհրութեան փող. № 23 (անկիւն Գանովսկայայ). Հեռաձայն 7 09.

(ա.օ.) առ. 92. 100—72

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

I

Կարեւոր է գիտակցել հայկական հարցի ներկայ բնաւորութիւնը, որը տարբերվում է օսմանեան պետութեան առաջ դրված միւս հարցերի ձեւակերպութիւնից:

Կարեւոր է գիտակցել, որպէսզի թէ հասկանալի լինի այդ հարցի առաջխաղացութիւնը քաղաքագիտական աշխարհում և թէ նպատակայարմարութիւն ստանան այն քայլերը, որոնք անվելու են այդ հարցի աջողութեան համար:

Մենք մի շարք յօդուածներով պարզեցինք այն պայմանները, որոնց մէջ արծարծված է և մշակվում հայկական հարցը:

Անենք մի քանի վերլուծումներ:

Հայերը այնպիսի քայլեր չարին, ինչպէս բալկանեան պետութիւնները: Նրանք պատերազմող կողմ չը հանդիսացան, նրանք չապստամբվեցին, նրանք չը կորեցին իրանց յարաբերութիւնները օսմանեան կառավարութեան հետ և նոյն իսկ՝ ընդհակառակը՝ նրանք օսմանեան զօրքերի հետ միասին և նրանց շարքերում կռուեցին օսմանեան թշնամիների դէմ և տուին թէ քաջութեան բազմաթիւ ապացոյցներ և թէ զոհաբերութեան սրտաշարժ օրինակներ:

Այնու ամենայնիւ հայկական հարցը դարձաւ հերթական դիւանագիտական հարց, և հայերը հանդիսացան իբրև պահանջողներ, իբրև բողոքողներ, իբրև իրաւատէրեր և իբրև պայքարող մի կողմ, որի հետ օսմանեան կառավարութիւնը պէտք է զգում բանակցութիւններ և սակարկութիւններ անել:

Հայկական հարցը դարձել է եւրոպական հանրային համակրութեան առարկայ, և նա քննութեան սեղանի վրա կը դրվի թէ Լոնդոնի միջազգային հաշտարար և թէ Պարիզի միջազգային ֆինանսական կոնֆէրենցիաների սեղանների վրա:

Թիւրքիան այլ ևս չէ բացասում հայկական հարցի գոյութիւնը: Թիւրքիան ԹԵՒ ամենևին չէ ախորժում այն բանից, որ հայոց պատրիարքարանը Կ. Պոլսում և Նուպար-փաշայի պատուիրակութիւնը Պարիզում և Լոնդոնում յարաբերութիւններ են սկսել եւրոպական դիւանագիտական մարմինների հետ, այնու ամենայնիւ մեծ մեղադրանքներ չէ բարդում հայերի վրա այդպիսի քայլերի համար և ինքն էլ ստիպված է խոստովանել, որ Թիւրքահայերը չեն հանդիսանում իբրև անջատականներ, իբրև Թիւրքիայի ամբողջութիւնը խախտողներ, այլ միայն մի հիմնական մեծ պահանջ ունեն՝ ստանալ ընդարձակ բարենորոգումներ հատատ երաշխաւորութիւններով, եւրոպական բարեգործութիւններով:

Եւ ահա հայկական հարցը ներկայանում է իբրև օրինական, բնական, անհրաժեշտութեան բնաւորութիւնը կրող մի հարց, որը հանգամանքների ոյժով և քաղաքական նկատումների տրամաբանութեամբ դարձել է հերթական և սպասում է իր մերձաւոր լուծումին:

Ա. Քալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Պետերբուրգից հեռագրում են, որ լուրերի համաձայն՝ Անգլիան առաջարկել է հայկական հարցը յանձնել Լոնդոնի դեսպանաժողովի քննութեան:

—

Հայաստանի զանազան տեղերից հիւպատոսները տեղեկութիւններ են ուղարկել նոր լուրջ անկարգութիւնների մասին: Քիւրդերը յարձակվում են հայերի վրա: Կարող են ծագել ուժեղ լուրջ անկարգութիւններ: «Н. Вр.»-ի ասելով՝ ռուսաց դեսպան Գիրսը նորից պահանջել է Բ. Դռնից միջոցներ ձեռք առնել քիւրդերի վայրագութիւնների դէմ: Դարձեալ խոստումներ ու խոստումներ. «Շուտով յատուկ մասնաժողով կուղարկվի Հայաստան»—եղել է արտաքին գործերի մինիստրի պատասխանը:

—

Ինչպէս յայտնի է, Բ. Դուռը մտադիր է հրատարակել այն բարենորոգումների ցուցակը, որ նա եւրոպական մասնագէտների ծրագրով դրծադրելու է հայկական վիլայէթներում: Այժմ Կ. Պոլսից հեռագրում են, թէ մինչև յիշեալ ցուցակի հրատարակութիւնը, որ տեղի է ունենալու միմիայն հաշտութեան արձանագրութիւնը ստորագրելուց յետոյ, ոչ մի բարելաւումն հայ ազգաբնակութեան համար չը պէտք է սպասել:

—

Կ. Պոլսից տեղեկացնում են «Р. Сл.»-ին. «Լուրերի համաձայն՝ լիբէրալ դաշնակցութեան գործիչները Անատոլիա են ուղարկում տասնեակ խօջաների և մօլլաների, որպէսզի պրոպագանդա մղեն մահմեդականների մէջ՝ բացասաբար վերաբերվելու դէպի կառավարական մասնաժողովի աշխատանքները, որին յանձնարարված է տեղում քննել դրութիւնը: Լիբէրալ դաշնակցութեան գործակալները պէտք է հաւատացնեն ազգաբնակութեանը, որ երիտասարդ-թիւրքերի մշակած բարենորոգումները չեն կարող բաւարար լինել, որովհետև նրանք բնաւ հիմնված չեն ապակենտրօնացման սկզբունքի վրա, որը ներկայումս միակ նպատակայարմարն է»:

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅԳԻՑ

—

Էրզրում, 10 մայիսի

Եկաւ «Биржъ. Вѣд.»-ի յատուկ թղթակից Օլգենինը: Նա անցել է ամբողջ Թիւրքահայաստանը—Վան, Բիթլիս, Տիգրանակերտ, Խարբերդ, Սվազ, Երզնկա և այլն, հաշակել այս երկրի բոլոր դատուութիւնները, ծանօթացել ժողովրդական լայն խաւերի տրամադրութեան հետ, արել ուսումնասիրութիւններ և այլն: Նա գտել է ջերմ ընդունելութիւն գրեթէ բոլոր վայրերում:

Էրզրումում միայն «Դաշնակցութիւն» կոչված կուսակցութեան 3—4 շէֆերը արտայայտվեցին բուռն հակակրական ոգով: Ինչ խօսք որ այդ վարմունքը երբէք կապ չունի և նոյն իսկ հակառակ է Վանի, Բիթլիսի, Մուշի և այլ վայրերում գտնվող դաշնակցականների տրամադրութեան հետ: Հաւանակ է նոյնպէս հայ ազգաբնակութեան տածած յոյսերին ու բաղձանքին: Եւ դեռ աւելին. այդ շէֆերի արտայայտութիւնը ծայրէ ի ծայր հակառակ է հէնց Էրզրումում գտնվող դաշնակցական խմբերի մտածողութեան: Այդ բանը Օլգենինն արդէն հնարաւորութիւն ունեցաւ ստուգելու:

«Դաշնակցութիւն» կուսակցութեան այդ փաշաներն իրանց թոյլ են տուել կողմնակալութիւններով յանդիմանել Օլգենինին՝ Թիւրք կառավարութեան դէմ նրա գործածած բուռն լեզուի համար՝ ու այն մի քանի սկանդալների մասին, որ նա ունեցաւ Թիւրքերի հետ: Մեթէ նորից պիտի կրկնվի ԻԹԹԻՀԱԴ-Դաշնակցութիւն բլոկի ողբերգական զաւեշտը:

Քուրմ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 30 ապրիլ

Անցան ձմերային դաժան օրերը, որոնց յաջորդեց Մուշին առանձնայատուկ զուարթ ու ճոխ բնութիւնն իր պարգևատու առատութիւնով: Բայց ի՞նչ ընենք, որ մեր երկրին բնութեան ճոխութիւնն ու զուարթութիւնը խոտոր համեմատութեան մէջ են մտած տեղական քաղաքական պայմանների հետ:

Ձեզ գրած նախորդ նամակս պօստին յանձնելէս ճիշդ 12 ժամ յետոյ թաղեցինք Խոսրով էֆ. Աղապապեանը:

Աղապապեանի սպանութիւնը կատարուած է հետեւեալ պարագաներուն մէջ: Ան, ինչպէս գրած էի ձեզ, իր պաշտօնի բերումով գացեր էր Քօսուր՝ քիւրդերու մէջ՝ աղնամի և յեսայեանց տուրքեր գանձելու: Իր պաշտօնը կատարելով՝ երբ պիտի քաղաք վերադառնար, վերջին օրը գիշերուան ժամը 9-ին, էր ԴԷԼԼԱԶԱԼԸ (ԿԱՅԱՆԻ ՔԷՐԷՐ) ախոռի սենեակին մէջ զրաղած միջոցին—կառավարական քօչաններ լեցնելու գործով—քիւրդական գնդակ մը վերեի երթիկէն կը սուրայ և վիրաւոր գետին կը ձգէ անբաղդ Խոսրով էֆէնդին:

Հետեւեալ օր պատգարակով բերուեցաւ քաղաք և յանձնուեցաւ իր թշուառ ընտանեաց, որոնք ազիկտուր լաց ու կոծի մէջ՝ սկսան դարմանումի եռեռ ըլլալ: Սակայն ի զուր: Դաւաճան գնդակը անցած լինելով խեղճ վիրաւորի ձախ թոքէն՝ վիրաւորուելէն 48 ժամ ետքը Խոսրով Աղապապեան կնքեց իր մահկանացուն:

Հանգուցեալը Հայոց Միացեալ Ընկ. նախկին սաներէն մին էր և անցնելով կեանքի թեամբ և բնական շնորհքով տիրապետած թիւրք և հայ լեզուներուն:

Խոսրով էֆ. Աղապապեանը ճշմարիտ անձնուէր պաշտօնեայի մը տիպարն էր:

Հանգուցեալին թաղումը Մուշի մէջ դեռ անմոռանալի հանդիսաւորութեամբ կատարուեցաւ: Շուկաները գոցուեցան այդ օրը, և հայերը խուռն բազմութեամբ կը հետեւէին դագաղին: Թաղման ներկայ էին հանգուցեալի բազմաթիւ պաշտօնակիցները և տեղւոյս զինուորական կօմանդանը, որ հայասէր և համակրելի անձնաւորութիւն մըն է և որ հանգուցեալի դագաղին վրայ եկեղեցւոյ մէջ խօսեցաւ դամբանական մը, շեշտելով մասնաւորապէս որ Խոսրով զոհ կերթար գաղափի մը գնդակին: Աղդեցիկ և յուզիչ էին Տարօնի առաջնորդ Ներսէս եպ. Խարախանեանին արտասանած դամբանականները, որոնց մէջ առաջնորդը շեշտեց, թէ 18 տարի առաջ այս եկեղեցւոյ մէջ և այս ժողովրդի առաջ թաղեցինք Հայլի Մուսաբէյի ձեռքով շամբուրի բռնուած և բարկ կրակի վրայ այրած Էրիշատեցի Փոստոյեան Օհանը... Եւ նոյն կառավարութիւնը, նոյն անպէտք ու արիւնոտ բէժիմը կը շարունակէ դեռ մինչև այսօր: Դաշնակցութեան տեղիս կոմիտէն պսակ դրած էր հանգուցեալի դագաղին վրայ: Խօսեցան և քանի մը ընկերներ:

Աւրանի սպանութիւնը մնաց անհետևանք: Ալին և իր երկու մեծ տղաները բանտէն ազատ արձակուեցան: Միայն մէկ փոքր տղան եղած է փախստական՝ ձգելով Աւրանը և շրջականերն ահ ու սարսափի մէջ. այնպէս որ՝ արևը մայր մանելէն յետոյ դրացի դրացիի տուն չի կրնար ազատ երթեւեկել:

Շմլակի կողմի արտերն ալ կը մնան անմշակելի: Աւրանը պաշարման վիճակի մէջ է քիւրդերէն: Մշեցի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ

—o—

«LA TURQUIE»-Ի ՑՕԴՈՒԱԾԸ

—

Հայ թերթերը չեն դադրիր խօսելէ Աբեւելեան Անատոլուի նահանգներու և Կիլիկիոյ կացութեան վրայ: Ապրիլ 22-ի և այս առտուան (23 ապրիլ) լրագիրները կը հրատարակեն հայոց պատրիարքարանին ստացած հեռագիրները, որոնք լուր կուտան ոճիրներ կամ մաքի այնպիսի վիճակ մը, զորս երկիւղալի կը համարին հայ եկեղեցական իշխանութիւնները: Խնդիրը կը դառնայ մասնաւորապէս Դիարբէքիրի, Բղիի, Ալաշկերտի և Հաջընի վրայ:

Զեռքերնիս չունինք կառավարութեան կողմէ սեէ պաշտօնական զեկոյց այս կացութեան վրայ, այնպէս որ չենք գիտեր,

թէ մինչև որ ասլՀան իրականութեան կը համապատասխանեն հայոց պատրիարքարանին հեռագիրներն ու տեղեկութիւնները։

Եթէ զանոնք պատացիօրէն առնել հարկ ըլլայ, որոշ կերպի թէ կը գտնուինք այնպիսի կացութեան մը առջև, որ մեծապէս արժանի է կառավարութեանը ուշադրութեանը։ Մանրամասնութիւնները այնքան կարևորութիւն չունին։ Գէօրգը աւելի կամ նուազ ծեծուեր է, թէ քիւրդ ղողպատը մը մէկ քանի ճամբորդ կողոպտեր է, ասիկա բնաւ չի փոխեր կացութիւնը։ Փոխանակ երկար բարակ ժամանակ անցնելու, հակակշռելու համար պատրիարքարան ղրկուած այս կամ այն հեռագրին այս-ինչ մանրամասնութիւնը, լաւագոյն կըլլայ իրերը քննել իրենց ամբողջութեանը մէջ և ընդհ. եզրակացութիւններ հանել անոնցմէ։ Այս եզրակացութիւնները կը յանգին միայն մէկ մտածման. անմիջապէս միջոցներ ձեռք առնել, ապահովելու համար կեանքը, ինչքը և պատիւը ընկեր ժողովուրդին։ Զայս կը պահանջէ ոչ միայն այս ժողովուրդին շահը, այլ նաև օտ. կառավարութեան շահը։

Արևելեան Անատոլուի նահանգներուն և մասնաւորաբար Կիլիկիոյ կացութիւնը առարկայ պիտի ըլլան ընդարձակ թակրիրի մը, զոր հայոց պատրիարքարանը այսօր կամ վաղը պիտի յանձնէ եպարքոսութեան։ Բ. Դուռը անշուշտ այս թակրիրին մէջ պիտի գտնէ լուրջ հիմ մը ուսումնասիրութեան և քննութիւններու, որոնք զինքը պիտի կրնան առաջնորդել այս թակրիրին ետքը ըլլալիք կարգադրութիւններուն մէջ։

Պէտք չէ մոռնալ, թէ ուրիշ եկեղեցական պետերու և նոյն իսկ հայոց պատրիարքարանին կողմէ ներկայացուած ուրիշ թակրիրներ ցոյց կուտային շարք մը միջոցներ, որոնք նուազագոյն պայմանները պէտք էր կազմէին կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդին բարգաւաճման համար։ Այս թակրիրները լաւօրէն նկատի չառնուեցան, քանի որ անպատասխանի մնացին։ Պէտք չէ, որ պատմութիւնը կրկնուի։ Պէտք է լաւ հսկողութիւն կատարել։

(«Մանդ. Էֆք.»)

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

14 Մայիսի

Ամէնք. — Գահաժառանգ արքայազնը մեկնեց Սալոնիկ։ Մինիստր-նախագահը մեկնում է վաղը։

«Ավերօվ» յածանաւը, ճիշդ որ, հնթարկվեց բոլգարների կրակին Կավալայից։ «Ավերօվը» անվնաս է։ Բոլգարների կրակին նա չը պատասխանեց։ Միջադէպը ծանր տպաւորութիւն է թողել ամբողջ Յունաստանում։

Պանդայօնի մօտերը, յոյն-բոլգարական ընդհարման ժամանակ, ըստ պաշտօնական թերի, սպանվել են 3 յոյն օֆիցէր և 56 զինուոր, վիրաւորվել են 3 օֆիցէր և 134 զինուոր։

Բացի «Ավերօվից» հնթարկվել են ռմբակոծութեան «Պարա» յածանաւը և մի քանի հակաականանաւ։

Յունաց նաւատորմը վերադարձաւ դէպի Լէմնոս։

Կարական կերպով հերքվում է այն տեղեկութիւնը, թէ բանակցութիւններ են վարվում Յունաստանի և Բալկանի միջև, որոնք իբր յանգել են համաձայնութեան։ Նոյնպէս ճիշդ չէ այն տեղեկութիւնը, թէ իբր Յունաստանը և Սերբիան դաշնակցութիւն են կապել 10 տարով։

Բէլգրատ.— Կուսակցութիւնների լիդէրները սկսուպշչինայի նախագահ յեռոյ խորհրդակցեցին Պաշիչի հետ այն մասին, թէ ինչպիսի պատասխան տան այն դեկլարացիային, որ մայիսի 15-ին մինիստրը կարդալու է սկուպշչինայում։ Հաւատի աղբիւրների համաձայն հերթական գործերին անցնելու բանաձևը կը յայտնէ թէ սկուպշչինան հաւանութիւն է տալիս կառավարութեան քաղաքականութեանը Բոլգարիայի հետ պայմանագիրը վերանայելու վերաբերութեամբ և մերժման դէպքում առաջարկում է կազմել առանձին մանաժողով դաշնակից տէրութիւնների զինուորական և քաղաքական լիազօրներից՝ Թիւրքիայում դրաւված բոլոր երկիրները իրար միջև բաժանելու նպատակով։ մանաժողովի վճիռը լինելու է վերջնական։

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻՍ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

14 Մայիսի

Լօնդօն.—Բէյտէրի տեղեկութիւնների համաձայն դեսպանաժողովը տևեց 2½ ժամ։ Հետևեալ նիստը կայանալու է ուրբաթ։ Ցանկութիւն է յայտնվել, որպէսզի հաշտութեան պայմանագրի նախագիծը ստորագրվի առանց փոփոխութեան ըստ հնարաւորութեան շուտով։ Գնվել է նաև, բացի հաշտութեան հարցից, ալբանական խնդիրը։

Ցոյն, սերբ և չերնոգոր պատգամաւորները տեսակցեցին մէկ ու կէս ժամ։ Պահանջ է յայտնված, որպէսզի դաշնակիցները և Թիւրքերը պարտաւոր լինեն ներկայացնելու իրենց ուղղութիւնը հաշտութեան պայմանագրի համար այն բոպէին, երբ յարմար կերևայ կուռոյ կողմերի պաշտօնական վճռաժողով գումարելու համար։ Բոլոր պատգամաւորները բացակայ էին և յեռոյ իրաւեկ եղան ընդունված վճիռների մասին։

Սատաս-սեկրէտար Գրէյը առանձին-առանձին ընդունեց բալկանեան հաշտութեան վեհաժողովի գլխաւոր պատգամաւորներ Նօվակովիչին, Դանէվին և Գէնադիոսին և յայտնեց նրանց, որ մեծ պետութիւնները կամենում են ստորագրված տեսնել հաշտութեան պայմանագիրը անմիջապէս, առանց որևէ փոփոխութիւն մտցնելու նրա մէջ։ Դանէվը պատասխանեց թէ յայտնեց ստորագրել պայմանագիրը անմիջապէս։ Գէնադիոսը և Նօվակովիչը յայտնեցին, որ մեծ պետութիւնների վճռի մասին կը տեղեկացնեն իրանց կառավարութիւններին և կը սպասեն նոր հրահանգների։

Գրէյը Թիւրքաց պատգամաւորին նոյնը յայտնեց, ինչ որ յայտնել էր դաշնակիցներին։ Օսման-Նիզամի-փաշան յայտնեց, որ Թիւրքաց պատուիրակութիւնը Անգլիա գալու առաջին օրից ի վեր, ինչպէս և այժմ, պատրաստ է ստորագրել հաշտութեան պայմանագիրը ամեն մի րոպէ, ձեռնպահ մնալով պայմանագրի նախագիծը փոխելու ամեն տեսակ փորձից։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

14 Մայիսի

Պետերբուրգ.—Նոցին Մեծութիւնների թագադրութեան օրվայ առիթով բոլոր եկեղեցիներում մատուցվեց պատարագ։

Ցարսկոյէ Սելօյում պատարագին բացի Նոցին Մեծութիւնների Օգոստափառ Դուստրներից ներկայ էր Գահաժառանգ Արքայազնը։

Հ. Գ. պետութեան զանազան քաղաքներից հեռագիրներ ստացաւ մաղթանքների ու զօրահանդէսների մասին։

Բերլին.—Անգլիական թագաւորական զոյգը մեկնեց։

Բէյլիստագը զբաղմունքները վերսկսեց։ Ներկայացված է ի միջի այլոց մի նախագիծ, որ ցմահ կամ ոչ պակաս երկու տարով բանտարկութիւն է որոշում նրանց, որոնք կը բռնվեն զինուորական լրտեսութեան մէջ։

Պարիզ.—Սենատն ընդունեց արտաքին գործերի մինիստրութեան բիւջէն։ Քննութեան ժամանակ Պիշոնը յայտնեց, որ յոյն-իտալական դժուարութիւնները Ալբանիայի վերաբերութեամբ շարունակվում են, դաշնակիցների միջև բուն դրած անտագոնիզմը աճում է։ Մեծ պետութիւնները ձգտելու են համաձայնեցնել բոլոր շահերը։ Ֆրանսիան հանդէս կը գայ իբրև միջնորդ չէզոք դատաւորի դերում, եթէ հարկ լինի։

(Ճեպընթաց)։ Պալատը 386 ձայնով ընդդէմ 165 ի ընդունեց այն 234 միլիոն ֆրանկը, որ յատկացված է զինուորական ծառայութեան մէջ ժամանակից դուրս պահվող զօրքերի պահպանութեան համար։

Զինուորական արտակարգ ծախքերի համար ֆինանսների մինիստրը առաջարկում է յատկացնել մի միլիարդ ֆրանկ։ Մինիստրի նախագծով յիշեալ գումարը պէտք է ծածկվի ազգային պրոգրէսիվ ու եկամտային հարկով։ Վերջինս սահմանվելու է այն եկամուտների վրա, որ 10,000 ֆրանկից աւելի են։

Վիէննա.—Պալատ։ Լեհ սոցիալիստ Դուշինսկին ասում է. «Այն փաստը, որ Ռուսաստանը աջակցութիւն ցոյց տուեց բալկանեան տէրութիւններին պատերազմի ժամանակ և որ նա ձգտում է ամրապնդել իր ազդեցութիւնը Բալկաններում, այն տպաւորութիւնն է թողնում, որ բալկանեան տէրութիւնների հզօրութեան աւելանալը այնքան էլ նպատակաւոր չէ Աւստրօ-Ունգարիայի համար. ալբան տէրութիւն ստեղծելը հանդիսանում է թոյլ սիրափանք. աւստրօ-ունգարական դիպլոմատիան պէտք է ամենաբարեկամական յարաբերութիւններ պահպանէ Թիւրքիայի հետ, որպէսզի կարելի լինի մաքառել Ասիական Թիւրքիայում Ռուսաստանի մեծ ազդեցութեան դէմ։

Զեխ ըէալիստ Մասարիկը ցաւ է արտայայտում, որ Աւստրիան հանդէս եկաւ ալբանների համար, որոնք այնքան էլ ընդունակ չեն կուլտուրական առաջադիմութեան։ Աւստրօ-Ունգարիան պէտք է որ հետևէ Անգլիայի և Գերմանիայի քաղաքական օրինակին Ասիական Թիւրքիայի վերաբերութեամբ և պէտք է աւստրօ-ունգարական առևտուրը զարգացնէ խաղաղ միջոցներով։ Աւստրօ-Ունգարիան կարող է աւելի լաւ պաշտպանել իրան այսպէս կոչված ռուսական վտանգի դէմ Բալկաններում՝ քաղաքատնտեսական ու առևտրական միջոցներով։ Աւստրօ-Ունգարիային հարկաւոր են առևտրական շփումներ, և ոչ թէ սպառազինումներ։

Տոկիօ.—Կայսրը ապաքինվում է։

Լօնդօն.—Բէյտէրին հաղորդում են Պէկինից, որ բրիտանական կառավարութիւնը բարեացակամօրէն ընդունեց Չինաստանի առաջարկութիւնը՝ նշանակելու Վենեցուելեայնին պատգամաւոր տիբէտական հարցի լուծման համար։ Մոնգոլական խնդրի լուծման բանակցութիւնները ընդունել են նոր պատաւոր ընթացք։ Ռուսաստանը վաղուց համոզվեց, որ Չինաստանը ռազմի պատրաստութիւններ չէ տեսնում մոնգոլական արշաւանքի համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՋԷՆՏԼՄԷՆՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐԷՆ՝ ԿՈՊԻՏ ԱՍԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յօրելեանական յանձնաժողովի դէպքի առիթով մի բացատրութիւն

IV

Մեր նախորդ յօդուածներից տեսանք, որ երբ Լէօ-Զարգարեան յօբել. յանձնախումբը մասնվեց անգործունեութեան. 1912 թ. հոկտեմբերի սկիզբներին կազմվեց մի նոր յօբելեանական մանաժողով, ընտրված Թիֆլիսի հայ հասարակութեան բոլոր խաւերի կողմից։ Այդ մանաժողովը իրան նպատակ դրեց՝ աջակցել էջմիածնի կենտրոնական յօբելեանական յանձնաժողովին և ընդգրկեց նրա հրատարակած ծրագիրը։

Երբ արտասահմանից յունվարի վերջերին ես վերադարձայ, գումարվեց մասնաժողովը (40 անձինք), որ ընտրելով 10 հոգուց բաղկացած մի բիւրօ՝ յանձնեց նրան մշակել մի ծրագիր և առաջարկել ընդհանուր ժողովին. միևնոյն ժամանակ որոշեց դիմել Ամենայն Հայոց Կաթողիկոսին և խնդրել հաստատել մանաժողովը իր կոնդակով, երբև աջակից մարմին էջմիածնի կենտրոն։ յօբել. յանձնաժողովի, որպէսզի մանաժողովը կարողանայ գործել և հանգանակութիւն սկսել յօգուտ դպրոցական ֆօնդի, քանի որ հրապարակի վրա չը կար ոչ մի այլ մարմին՝ մտածող այդ մասին։

Գրութիւնը ուղարկվեց Վեհ. Կաթողիկոսին, երբ Թիֆլիս եկաւ Նորահաստատ առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը։

Ահա այդ ժամանակ Լէօ-Զարգարեան յանձնախումբը, որ ինքն իրան անգործունէութեան էր մատնել և լուծել, իմանալով որ մեր մանաժողովը դիմել է Կաթողիկոսին և սպասում է նրա հաստատութեան կօնդակին՝ գործելու համար, դիմում է Մեսրոպ եպիսկոպոսին և խնդրում միութիւն կայացնել երկու մարմինների միջև. Մեսրոպ եպիսկոպոսը կատարում է նրանց խնդիրքը և դիմում Կաթողիկոսին, խնդրելով յետաձգել մեր մանաժողովի հաստատութիւնը, պատճառաբանելով, որ ինքը մտադիր է միութիւն առաջ բերել երկու մարմինների միջև։ Այդ դիմումը անելուց յետոյ, որի մասին մեր մանաժողովը ոչ մի տեղեկութիւն չունէր և իմացաւ միայն էջմիածնից, Մեսրոպ եպիսկոպոսը դիմեց ինձ և Յ. Սպէնդիարեանին և առաջարկեց միութեան ծրագիրը։ Մենք ուրախութեամբ ընդունեցինք այդ առաջարկը և խոստացանք գումարել մեր մանաժողովը լրիւ կազմով (40 հոգին) և քննել խնդիրը, յայտնելով սակայն Մեսրոպ եպիսկոպոսին, որ միութիւնը հնարաւոր է միայն հետևեալ պայմաններով. 1) ընդունել էջմիածնի ծրագիրը և դպրոցական ֆօնդը, 2) կազմել երկու մարմիններից մի նոր յօբել. մարմին։ Մեսրոպ եպիսկոպոս պատասխանեց, թէ առաջին պայմանը ինքն ըստ ինքեան անփոփոխելի է, քանի որ ինքը պարտաւոր է կատարել կաթողիկոսական կօնդակը, և որ մեր հակառակ կողմն ընդունում է այդ պայմանը և նրա դէմ չէ. «Վերջապէս,—ասաց եպիսկոպոսը,—ես չեմ կարող թոյլ տալ ուրիշ որևէ նոր պայման կամ առաջարկ՝ կօնդակի տրամադրութիւններից զատ։ Գաղով երկրորդ պայմանին, կասեմ, որ ձեր մանաժողովը բաղկացած լինելով 40 հոգուց, իսկ նրանցը՝ 10—12 հոգուց, երկու մարմինների միացնելը անարդարութիւն կը լինի, որովհետև ձեր մանաժողովը ձայների գերակշռութիւն կունենայ։ Ես և Յ. Սպէնդիարեանը պատասխանեցինք, որ այդ դէպքում մեր 40 հոգին ժողովի կը գան նոյնքան ձայնով, որքան կունենայ մեր հակառակորդ յանձնախումբը։ և երբ ժողով գումարվի, մենք ես մեր միջից կընտրենք միայն 10—12 հոգի, հաւասար թիւով նրանց յանձնախմբի անդամների հետ։

Այս տեսակետից յետոյ, [illegible] 6-ին գումարվեց մեր մանաժողովը, որի քննութեան ենթարկեցի Մեսրոպ եպիսկոպոսի առաջարկը։ Ժողովը ցանկալի գտաւ միութիւնը և որոշեց կատարել այն հետևեալ անյեղլի պայմաններով. 1) Երկու մարմիններին, այն է՝ յանձնախմբի և մանաժողովի միութիւնը ընդունելի է այն պայմանով, որ 400-տարեկան յանձնախումբը (Լէօ-Զարգարեան) ընդունէ էջմիածնի հրատարակած հիմնական սկզբունքները, այն է՝ «ոսնախմբութեան կատարումը հոկտ. 12-ին էջմիածնում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, և «Դպրոցական ֆօնդը» իբրև սկզբունք յաւերժացման. 2) Երկու մարմինները միանալ ոչ միայն այն, թէ ինչպէս է գրել հեղինակը, այլ որ միակ անհրաժեշտութիւնն է, ինչը ինչպէս է գրել։ Բայց այս բոլորից յետոյ պարզ է այն ևս, որ մեր պաշտպանած տեսակէտը ոչ թէ մի արհամարհելի ճշմարտութիւն է, այլ չափազանց բարդ, չափազանց դժուարին մի գործ, որը Գրասէրի քերթուածում սակայն ստացել է մանկական արտայայտութիւն («2×2=4»)։

Մաքուր արուեստի կամ գեղարուեստը գեղարուեստի համար սկզբունքի կողմնակիցները ասում են, թէ գեղարուեստական է այն գրուածքը, որ տպաւորիչ, հմայիչ է ու ազդու։ Բայց ինչով է տպաւորիչ։ այս հարցին պատասխանելու համար (երկիւղ եմ կրում, որ նորից «կախարդական զօրութիւնը» հանդէս գայ...) նրանք դիմում են ձևին ու ոճին։ Եւ դուրս է գալիս, որ «ոչինչ չը բացատրող» այբբենական ճշմարտութիւնների կողքին ամեն ինչ բացատրողը, յուզողը, տպաւորիչը գրուածքի ոճն ու ձևն է։ Որպիսի՛ ծանծաղամտութիւն։ Մթթէ գրուածքը յարատև տպաւորիչ է մնում միայն նրանով, թէ ինչպէս է պատմում, թէ նրանով, թէ ինչը ինչպէս է պատմում։ Ես կարող եմ գեղեցիկ ձևով ու ոճով մի դատարկ բան պատմել. մթթէ դա բուսական է իմ պատմութիւնը գեղարուեստական դարձնելու։ Ցարատև տպաւորիչ և հմայիչ դարձնելու համար ձևն է միայն կարևոր թէ նրա մէջ դրված խորը բովանդակութիւնը։

Ինչու այդպէս խոշոր տարակուսանք է պատճառում Գրասէրին Հոմերոսի «Իլիականը», որը մեր հասարակական-մտաւորական էպօխայից ամբողջ երկու և կէս հազար տարի առաջ գրված լինելով հանդերձ՝ այսօր այնու ամենայնիւ նա մեզ կարող է էստետիկական որոշ հաճոյք պատճառել (բայց ոչ յուզել, ի հարկէ)։ Ո՞րն է դրա պատճառը, ինչու է այդպէս, ինչու է Հոմերոսը անմահ, ինչումն է նրա գաղտնիքը, հարցնում է Գրասէրը և նոյն իսկ սպառնում է. Գրուածքը իր ամբողջութեամբ պատկերացնում է (ոչ արձանագրում) կեանքը այնպէս, ինչպէս նա կայ, և իր պատկերացման մէջ ծայրայեղութիւններ ու աղաւաղումներ չէ մտցնում, այն ժամանակ մենք ասում ենք, որ դա գեղարուեստական գրուածք է։ Բայց Բաֆֆիի «Խենթի» մասին գիտենք, որ գրուածքի օբիեկտիվ (իրական) մասը գեղարուեստական որոշ տարրեր պարունակում է իր մէջ, իսկ սուբիեկտիվ մասը՝ բառի բուն նշանակութեամբ շարադրութիւն է, որովհետև Վարդանն ու Դաւդուկիանը, այլ և Մելիք-Մանսուրը շարժվում ու գործում են ոչ իրանց, այլ հեղինակի կամքով ու թելադրութիւններով։ Այսպիսով հրապարակախօսութիւնն ու գեղարուեստը խառնված են իրար հետ Բաֆֆիի «Խենթի» գրուածքում, ինչպէս և նրա միւս վէպերում։ Բայց դրա պատճառները խոր են. նրանք Բաֆֆիի անձնաւորութեան մէջ չեն միայն. նրանք էպօխայի արդիւնք են։

Սակայն ինչպէս մենք հասանք գրուածքի այս գնահատութեան. ամենից առաջ մեկնակէտ ունենալով հասարակական յարաբերութիւնների տեսակէտը։ Կը նշանակէ՝ գեղարուեստական մի գրուածքի արժէքը որոշելու համար նախ պէտք է գտնենք նրա հասարակագիտական համարժէք տարրը, և ապա ըստ այնմ ընդգծենք նրա գեղարուեստական այս կամ այն արժանիքը։ Եւ որովհետև մարդկային հոգեկան կեանքի աղբիւրը՝ նրա միջավայրի հասարակական կեանքն է, ուրեմն գեղարուեստական տեսակէտից բարձրարժէք են այն տաղանդաւոր գեղարուեստագէտի արտադրութիւնները, որը մասաւոր լայն հորիզոն ունի, խորապէս ուսումնասիրել է հասարակական միջավայրն ու մարդկային պսիխիկան։

Այս բոլորից յետոյ պարզ է, որ առանց հասարակական յարաբերութիւնների տեսակէտի անհնար է տալ գրուածքի գեղարուեստական գնահատութիւնը, և որ սրանով ուրիշ նաև օտ. կառավարութեան շահը։

Արևելեան Անատոլուի նահանգներուն և մասնաւորաբար Կիլիկիոյ կացութիւնը առարկայ պիտի ըլլան ընդարձակ թակրիրի մը, զոր հայոց պատրիարքարանը այսօր կամ վաղը պիտի յանձնէ եպարքոսութեան։ Բ. Դուռը անշուշտ այս թակրիրին մէջ պիտի գտնէ լուրջ հիմ մը ուսումնասիրութեան և քննութիւններու, որոնք զինքը պիտի կրնան առաջնորդել այս թակրիրին ետքը ըլլալիք կարգադրութիւններուն մէջ։

Պէտք չէ մոռնալ, թէ ուրիշ եկեղեցական պետերու և նոյն իսկ հայոց պատրիարքարանին կողմէ ներկայացուած ուրիշ թակրիրներ ցոյց կուտային շարք մը միջոցներ, որոնք նուազագոյն պայմանները պէտք էր կազմէին կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդին բարգաւաճման համար։ Այս թակրիրները լաւօրէն նկատի չառնուեցան, քանի որ անպատասխանի մնացին։ Պէտք չէ, որ պատմութիւնը կրկնուի։ Պէտք է լաւ հսկողութիւն կատարել։

(«Մանդ. Էֆք.»)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՐՁԵԱԼ ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

II

Եթէ Գրասէրը գրական թիւրիմացութեան մասին խօսելիս կանգ առնէր միմիայն միջավայրի տեսակէտից ըղկող այս կամ այն քննադատական յօդուածի վրա և քննադատէր այն առանց շառաչուն նախաբանի, նրա հետ կարելի էր համաձայնվել կամ ոչ *)։ Բայց երբ նա աղմկում ու շառաչում է այն ճշմարտութիւնների շուրջը, որոնք վերաբերում են նրա հաւար խորթ քննադատական մեթոդին, այն ժամանակ մենք նրան կասենք՝ կանգ առէք և նախ մաքրեցէք ձեր ակնոցը։ Պնդում ենք, որ հասարակական յարաբերութիւնների տեսակէտից քննադատել՝ չէ նշանակում ասել միայն, թէ այս կամ այն գեղարուեստական գրուածքը, նրա հետ և ինքը գրողը այս կամ այն դարի և միջավայրի արդիւնք է ու պրծաւ գնաց։

Պնդում ենք, որ Գրասէրի կողմից մեծ անզգուշութիւն էր առանց կշռադատութեան հրապարակ գալ իր ծանծաղ, մակերեսային եզրակացութիւններով ու նրանց շարքը «տասնակ մղոնները երկարացնել»։ Հասարակական յարաբերութիւնների տեսակէտը այնքան լայն շրջանակ ունի, որ նրա մէջ պարփակվում է ոչ միայն գեղարուեստական ստեղծագործութեանը ծնունդ տուող միջավայրի հասարակական բովանդակը, հասարակական տարբեր խաւերի փոխադարձ պայքարները ու տարաձայնները, նրանց կենցաղն ու հոգեբանութիւնը, հասարակական ձևերի փոխանցման շրջանների ցաւատ ելևէջները, մարդկային ձգտումներն ու տենչերը, ժամանակի մարդու ուղեղը մաշող մաքերն ու խոհերը, նրան ոգևորող ու հիասթափեցնող զգացմունքներն ու տրամադրութիւնները, այլև ժամանակին, տեղին, միջավայրին յատուկ էստետիկական ճաշակն ու հակացողութիւնը։ Ըստ այսմ՝ նրա մէջ պարփակվում է ոչ միայն գեղարուեստական ստեղծագործութեան բովանդակութեան բարդ խնդիրը, այլ և նրա էստետիկական գնահատութիւնը։ Եւ եթէ այս ամենը ըմբռնելու և օբիեկտիվ կերպով գործադրելու շնորհքը ունենայ քննադատը, ապա ուրեմն նա չափազանց կընճռոտ, դժուարին գործ է կատարել։ Որ մեզանում՝ քննադատութեան այս մեթոդը իր ամբողջութեամբ գործադրող տակաւին չը կայ, այլ կան միայն փորձեր, դրսևորված կատած չը կայ. բայց չը պէտք է մոռանալ, որ այսօրինակ քննադատութիւնը մեզանում դեռ ևս փորձերի շրջանում գտնվելով՝ արդէն զարգացման որոշ ասպիճանի վրա է, և որ այդ աշխատանքը կատարվում է յատկապէս մարքսիստների ջանքերով։ Մեր կարծիքով, աւելի քան ապիտութիւն է ասել, թէ քննադատութեան այս մեթոդը նոյնն է, ինչ Լէօինը. կը նշանակէ՝ ասողը չէ կարողանում պարզօրէն որոշել աչքի ընկնող այն տարբերութիւնը, որ կայ կանխորոշ իդէայի գեղարուեստական տենդենցիօզ պահանջների և հասարակական յարաբերութիւնների տեսակէտի օբիեկտիվ վերաբերմունքի մէջ։ Հարկաւ, այս այսպէս լինելով հանդերձ, այս ամենը Գրասէրի աչքում կարող է կրկին մնալ որպէս մի այբբենական արհամարհելի ճշմարտութիւն։ Բայց արդեօք այդպէս է։ Ապա փորձեցէք հայ հասարակական միջնադարեան միջավայրի յարաբերութիւնների տեսակէտից վերլուծել, օրինակ, Գրիգոր Նարեկացու բանաստեղծութիւնները, նրա հոգեկան վերապրումների աղբիւրները, ժամանակի ոգու մղձաւանջային ազդեցութիւնը, մտքի և երևակայութեան թռիչքների ազդակները և այն ձևերի արժէքը, որոնց մէջ նա դնել է իր խոհերն ու յոյզերը և այլն և այլն, մի խօսքով՝ փորձեցէք գտնել այդ հանճարեղ մարդու պօէզիայի հասարակական համարժէք տարրն ու ապա նրա գեղարուեստական գնահատութիւնը։ Եթէ այս ամենը հաւասար է այբբենական մի ճշմարտութեան, ըստ Գրասէրների, այն ժամանակ մնում է ծանծաղամտութիւնը աստուածացում համարել և նախանձով դէպի նա՝ վազել ու աղօթել...

Տրված է մեզ, ենթադրենք, գեղարուեստական մի գրուածք. մենք պէտք է գնահատութեան ենթարկենք այն. պէտք է որոշենք՝ արդեօք դա ստեղծագործութիւն է իսկապէս, թէ չարադրութիւն։ Աւելի կոնկրետ փաստ. ենթադրենք մեր առջև է Բաֆֆիի «Խենթը»։ Ինչպէս մօտենալ նրա վերլուծութեանը և ինչպէս որոշել՝ գեղարուեստական է այդ գրուածքը թէ ոչ, և եթէ այո՝ ամբողջովին, թէ մասամբ, այսինքն իր որոշ տիպերով։ Ամենից առաջ մենք դիմում ենք այն միջավայրին, որտեղի ծնունդ է հանդիսանում Բաֆֆին իր «Խենթով»։ Մենք դժուար էկսկուրսիա ենք կատարում դէպի այդ միջավայրը, աշխատում ենք գտնել նրա ընդհանուր բնաւորութիւնը, պայմանները, կենցաղը, ժամանակի յարաբերութիւններից ծնված տարբեր խաւերի տրամադրութիւնները, ձգտումներն ու տենչերը, նրանց խոհերն ու զգացմունքները, մի խօսքով նրանց պսիխիքայի ամբողջ աշխարհը իր դրդիչ պատճառներով։ Եւ այնուհետև, երբ մենք դիմում ենք գրուածքի ընդհանուր բնաւորութեանը և այն համապատասխան գտնում միջավայրի ընդհանուր բնոյթին։ երբ գրուածքի կենտրոնական տիպերի հոգեբանութիւնը գտնում ենք ըստ ամենայնի ճիշդ վերարտադրված. երբ նրանց նկատում ենք որպէս այդ միջավայրերում հնարաւոր կենդանի մարդիկ. երբ այդ տիպերը ապրում, գործում ու պայքարում են ոչ հեղինակի, այլ իրանց կամքով ու իրական դրդիչների ոյժով. երբ գտնում ենք, որ գրուածքը իր ամբողջութեամբ պատկերացնում է (ոչ արձանագրում) կեանքը այնպէս, ինչպէս նա կայ, և իր պատկերացման մէջ ծայրայեղութիւններ ու աղաւաղումներ չէ մտցնում, այն ժամանակ մենք ասում ենք, որ դա գեղարուեստական գրուածք է։ Բայց Բաֆֆիի «Խենթի» մասին գիտենք, որ գրուածքի օբիեկտիվ (իրական) մասը գեղարուեստական որոշ տարրեր պարունակում է իր մէջ, իսկ սուբիեկտիվ մասը՝ բառի բուն նշանակութեամբ շարադրութիւն է, որովհետև Վարդանն ու Դաւդուկիանը, այլ և Մելիք-Մանսուրը շարժվում ու գործում են ոչ իրանց, այլ հեղինակի կամքով ու թելադրութիւններով։ Այսպիսով հրապարակախօսութիւնն ու գեղարուեստը խառնված են իրար հետ Բաֆֆիի «Խենթի» գրուածքում, ինչպէս և նրա միւս վէպերում։ Բայց դրա պատճառները խոր են. նրանք Բաֆֆիի անձնաւորութեան մէջ չեն միայն. նրանք էպօխայի արդիւնք են։

Սակայն ինչպէս մենք հասանք գրուածքի այս գնահատութեան. ամենից առաջ մեկնակէտ ունենալով հասարակական յարաբերութիւնների տեսակէտը։ Կը նշանակէ՝ գեղարուեստական մի գրուածքի արժէքը որոշելու համար նախ պէտք է գտնենք նրա հասարակագիտական համարժէք տարրը, և ապա ըստ այնմ ընդգծենք նրա գեղարուեստական այս կամ այն արժանիքը։ Եւ որովհետև մարդկային հոգեկան կեանքի աղբիւրը՝ նրա միջավայրի հասարակական կեանքն է, ուրեմն գեղարուեստական տեսակէտից բարձրարժէք են այն տաղանդաւոր գեղարուեստագէտի արտադրութիւնները, որը մասաւոր լայն հորիզոն ունի, խորապէս ուսումնասիրել է հասարակական միջավայրն ու մարդկային պսիխիկան։

Այս բոլորից յետոյ պարզ է, որ առանց հասարակական յարաբերութիւնների տեսակէտի անհնար է տալ գրուածքի գեղարուեստական գնահատութիւնը, և որ սրանով ուրիշ նաև օտ. կառավարութեան շահը։

Արևելեան Անատոլուի նահանգներուն և մասնաւորաբար Կիլիկիոյ կացութիւնը առարկայ պիտի ըլլան ընդարձակ թակրիրի մը, զոր հայոց պատրիարքարանը այսօր կամ վաղը պիտի յանձնէ եպարքոսութեան։ Բ. Դուռը անշուշտ այս թակրիրին մէջ պիտի գտնէ լուրջ հիմ մը ուսումնասիրութեան և քննութիւններու, որոնք զինքը պիտի կրնան առաջնորդել այս թակրիրին ետքը ըլլալիք կարգադրութիւններուն մէջ։

Պէտք չէ մոռնալ, թէ ուրիշ եկեղեցական պետերու և նոյն իսկ հայոց պատրիարքարանին կողմէ ներկայացուած ուրիշ թակրիրներ ցոյց կուտային շարք մը միջոցներ, որոնք նուազագոյն պայմանները պէտք էր կազմէին կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդին բարգաւաճման համար։ Այս թակրիրները լաւօրէն նկատի չառնուեցան, քանի որ անպատասխանի մնացին։ Պէտք չէ, որ պատմութիւնը կրկնուի։ Պէտք է լաւ հսկողութիւն կատարել։

(«Մանդ. Էֆք.»)

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

14 Մայիսի

Ամէնք. — Գահաժառանգ արքայազնը մեկնեց Սալոնիկ։ Մինիստր-նախագահը մեկնում է վաղը։

«Ավերօվ» յածանաւը, ճիշդ որ, հնթարկվեց բոլգարների կրակին Կավալայից։ «Ավերօվը» անվնաս է։ Բոլգարների կրակին նա չը պատասխանեց։ Միջադէպը ծանր տպաւորութիւն է թողել ամբողջ Յունաստանում։

Պանդայօնի մօտերը, յոյն-բոլգարական ընդհարման ժամանակ, ըստ պաշտօնական թերի, սպանվել են 3 յոյն օֆիցէր և 56 զինուոր, վիրաւորվել են 3 օֆիցէր և 134 զինուոր։

Բացի «Ավերօվից» հնթարկվել են ռմբակոծութեան «Պարա» յածանաւը և մի քանի հակաականանաւ։

Յունաց նաւատորմը վերադարձաւ դէպի Լէմնոս։

Կարական կերպով հերքվում է այն տեղեկութիւնը, թէ բանակցութիւններ են վարվում Յունաստանի և Բալկանի միջև, որոնք իբր յանգել են համաձայնութեան։ Նոյնպէս ճիշդ չէ այն տեղեկութիւնը, թէ իբր Յունաստանը և Սերբիան դաշնակցութիւն են կապել 10 տարով։

Բէլգրատ.— Կուսակցութիւնների լիդէրները սկուպշչինայի նախագահ յեռոյ խորհրդակցեցին Պաշիչի հետ այն մասին, թէ ինչպիսի պատասխան տան այն դեկլարացիային, որ մայիսի 15-ին մինիստրը կարդալու է սկուպշչինայում։ Հաւատի աղբիւրների համաձայն հերթական գործերին անցնելու բանաձևը կը յայտնէ թէ սկուպշչինան հաւանութիւն է տալիս կառավարութեան քաղաքականութեանը Բոլգարիայի հետ պայմանագիրը վերանայելու վերաբերութեամբ և մերժման դէպքում առաջարկում է կազմել առանձին մանաժողով դաշնակից տէրութիւնների զինուորական և քաղաքական լիազօրներից՝ Թիւրքիայում դրաւված բոլոր երկիրները իրար միջև բաժանելու նպատակով։ մանաժողովի վճիռը լինելու է վերջնական։

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻՍ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

14 Մայիսի

Լօնդօն.—Բէյտէրի տեղեկութիւնների համաձայն դեսպանաժողովը տևեց 2½ ժամ։ Հետևեալ նիստը կայանալու է ուրբաթ։ Ցանկութիւն է յայտնվել, որպէսզի հաշտութեան պայմանագրի նախագիծը ստորագրվի առանց փո

նները ժողով գումարելով առաջնորդի նախագահութեամբ կընտրեն մի գործադիր կոմիտէ, բաղկացած 10 կամ 20 հոգուց, ամեն մի կողմից հաւասար թւով անդամներից. 3) Երկու մարմինների միացեալ ընդհանուր ժողովին կողմակի անձինք չը պէտք է մասնակցեն, քանի որ երկուսն էլ կանխօրէն ընտրված են ազգային-եկեղեցական-կուլտուրական հաստատութիւնների և Թիֆլիսի հայ հասարակութեան զանազան խաւերի ներկայացուցիչների մասնակցութեամբ։

Այս որոշումը յայտնեց Մեսրոպ եպիսկոպոսին ապրիլի 7-ի գրութեամբ։

Եւ մինչ սպասում էինք, որ սրբազան առաջնորդը կը հրաւիրէ ժողովի երկու մարմինները, առացնք մի գրութիւն, ուրից երևում էր, որ նա նշանակել է բոլորովին մի այլ տիպի ժողով, այն է 1) մեր՝ 40 հոգուց բաղկացած մանդատորից հրաւիրում է միայն 10 հոգի, իբրև ներկայացուցիչներ, 2) Լէօ-Զարգարեան յանձնախմբից, որ բաղկացած է ամբողջովին 10 հոգուց, նոյնպէս հրաւիրում է բոլոր այդ 10 հոգուն, 3) բացի դրանից՝ հրաւիրում է և երկու-երկու ներկայացուցիչներ բոլոր հասատութիւններից, որոնց մեծ մասը մասնակցել է այդ յանձնախմբի ընտրութեան։ Դուրս էր գալիս, որ Լէօ-Զարգարեան յանձնախումբը հրաւիրվում է մասնակցելու ժողովին իր ամբողջ կազմով և բոլոր իրան ընտրողների հետ, մինչ մեր մանդատորը հրաւիրվում է մասնակցելու ժողովին միայն քառորդով, առանց իր ընտրողներին հետևարար, այդպիսի արուեստական կերպով վաղօրօք մեծամասնութիւնը տրվում էր Լէօ-Զարգարեան յանձնախմբին։ Այդ անարդար դասաւորումը, որ ստեղծում էր արուեստական կերպով մեծամասնութիւն մի կողմի համար, չէր կարող վրիպել մեր աչքից, ուստի և ես դիմեցի Մեսրոպ եպիսկոպոսին և խնդրեցի բացատրութիւն, յայտնելով և իմ վախս, որ այդպիսով մի կողմը ձեռք է բերում մեծամասնութիւն, ուստի և կարող է յենվելով իր մեծամասնութեան վրա, կայացնել որոշումներ, հակառակ մեր առաջարկած պայմաններին։

Մեսրոպ եպիսկոպոս բացատրեց ինձ, որ այդ վախը բոլորովին անհիմն է, քանի որ հակառակ կողմը տրամադիր է ընդունել մեր առաջարկած պայմանները, հետևարար քուէարկութիւն չէ լինելու այդ խնդիրների մասին, և ինքը պնդելու է ժողովի մէջ, որ այդ սկզբունքները ընդունվեն առանց քուէարկութեան. սակայն նա հարկ է համարել հրաւիրել և հասատութիւնների ներկայացուցիչները, նախ՝ որովհետև Կաթողիկոսի յանձն եպիսկոպոսի ասած կոնդակի մէջ հրամայել է կազմել «թեմական յանձնաժողով», երկրորդ՝ որովհետև Լէօ-Զարգարեան յանձնախումբը, իրան լուծված համարելով, կամենում է, որ իր ընտրողները նորից գան և վերընորեն իրան։ Երբ ես նկատեցի, որ այդ յանձնախումբը կարող էր առանձին ժողովի հրաւիրել իր ընտրողներին, վերընտրվել և ապա գալ Մեսրոպ եպիսկոպոսը պատասխանեց, որ ժամանակ չը կայ, աւելի յարմար է միևնոյն ժողովում կատարել այդ բանը։

Ցամենայն դէպս, նորից հաւատաց ինձ Մեսրոպ եպիսկոպոսը. «Ձեզ հարմար միևնոյնն է, քանի որ երկու կողմերդ հաւասար ձայներ էք ունենալու, որովհետև էական սկզբունքներն արդէն կանխորոշված են։»

Ահա այդ հաւասարքը ստիպեց մեր մասնաժողովին մասնակցել ժողովին, բայց, դարձեալ, զգուշութեան համար, որոշվեց նորից զրաւորապէս յայտնել եպիսկոպոսին մեր պայմանները և նոյն իսկ մի երկու հոգի ուղարկել միայն՝ մեր առաջարկները յայտնելու և բացատրելու համար։

Այդ գրութիւնը, որ կրկնութիւն է ապրիլի 22-ի գրութեան, ես ներկայացրի Մեսրոպ եպիսկոպոսին, ժողովի բացման ժամին։ Երկու գրութիւններն ես կարդացվեցին, և նրանք տպված են «Մշակի» № 86-ում։

Մենք այնքան համոզված էինք, որ մեր առաջարկը պէտք է ընդունվի առանց որևէ առարկութեան, իբրև առաջուց պայմանաւորված առաջարկ, որ «Մշակի», «Արօրի», «Աղբիւր»-«Տարազի» խմբագրութիւնները և մի քանի այլ հասատութիւններ հարկ չէին համարել ներկայացուցիչներ ուղարկել, այլ միայն գլխաւորապէս յայտնել էին, որ իրանք միանում են մեր մասնաժողովի արած առաջարկներին և միայն այդ պայմաններով հնարաւոր են համարում միութիւնը։

Ժողովի ժամանակ ես, ինչպէս կը վկայեն ներկայ եղողները և ինքը նախագահը, ամեն կերպ աշխատեցի յօգուտ համերաշխութեան և միութեան, ոչ մի առիթ չը տուի կասկածելու, թէ ցանկացող չեմ այդ միութեան, մինչ այն ատենն, որ հակառակորդներից մի երկուսը (Ն. Կաճկաճեան և կարծեմ Երզնկեան) զովեցին իմ ջանքերը համերաշխութեան։

Բայց, ասաց, ես վերջ է վերջոյ ստիպվեցի համոզվել, որ իմ վախս զուր չէ եղել՝ մեր հակառակորդները լեզուով ուրիշ են ասել սրտով ուրիշ. որ նրանք թագուն նպատակ են ունեցել, է չարն գործ դնելով նոյնիսկ Մեսրոպ եպիսկոպոսի հաւատը և միամտութիւնը. որ մեր հակառակորդները մեր ցոյց տուած չէնաբարեմտութեան փոխարէն չեն քաշվել պատասխանելու կոպտապատասխանութիւնը, պարզապէս կամենալով խարէութեան միջոցով թակարդ լարել մեզ։

Ժողովի հեռանալը ցոյց տուեց, որ մեր հակառակորդների նպատակն եղել է՝ 1) առանց հարկերպվելով մեր առաջարկներին, ժողովը կազմել տալ այնպէս, որ իրանք մեծամասնութիւն ունենան. 2) դիտմամբ լուծել հրատարակեն երկու տարբեր մարմինները և ապա, յենվելով իրանց մեծամասնութեան վրա, իրանց յանձնախումբը վերընտրեն, իսկ մեր մասնաժողովից ընտրեն նրանց, ում կը ցանկան, և աւելի նուազ թւով, որպէսզի նոր յանձնաժողովի մէջ իրանք դարձեալ մեծամասնութիւն կազմեն և ապա՝ ինչ ծրագիր կամենան, առաջ քշեն, բայց այս անգամ արդէն և մերոնց մասնակցութեամբ։

Եւ պէտք է ասած, որ այդ ճիզվիտական ծրագիրը աջողութեամբ առաջ տարան նրանք, միայն մոռացել էին մի փոքր կէտ, որ պէտք է հենն ի վեր տապալէր յեսոյ այդքան մեծ նեղութիւններով, երկունքով և անկօրեկտութեամբ յղացված ծրագիրը. այն, որ, խարէութիւնը բացվելով, մեր կողմից ընտրվածները կարող են հրաժարվել և նրանց ամբողջ այդ ծրագիրը ի չէք դարձնել։

Այդպէս էլ եղաւ։ Երբ մեր կատարեալ հաւասարը ստանալու արվեց, երբ մեր ջէնտլմէնութեան պատասխանվեց կոպտապիականութեամբ մեր հակառակորդների կողմից, երբ պայմանագրութիւնը անարգելի կերպով խախտվեց, մեզ մնում էր միայն հեռանալ, թէև բարոյական յաղթութիւնը ամբողջովին մեր կողմն էր, որովհետև մեր հակառակորդները ընդունել էին այն, ինչ որ ամբողջ մի տարի մերժում էին ընդունել, այն է՝ էջմիածնի ծրագիրը, այսինքն ընդունել էին մեր ուղղափառութեան գլխաւոր և էական կէտերը։ Ճիշդ է, նրանք այդ ընդունեցին յեսոյ մաքով, որպէսզի դարձեալ իրանք լինեն գործող, բայց մեզ համար այդ միևնոյնն էր. մեզ միայն հարկաւոր էր, որ այն մարդիկ, որոնք ամբողջ տարի պոռում էին, թէ «մենք Կանոսսա չենք գնայ», գնացին Կանոսսա և իրանց թքածը յետ լիզեցին։

Այդ նպատակին մենք հասանք, և բարոյական յաղթութիւնը ամբողջովին մերն էր։

Բայց «Հօրիզոնը» աշխատեց այդ բարոյական պարտութիւնը վարագուրել, ուստի և դիմեց յոխորտանքների և փաստերի յետ-շրջմամբ, որոնց մասին կը խօսենք եկող անգամ։ Հ. Ա.

ԵՒՍԵՎՐՈՊԻՈՅ ՆԱՄԱՐԻՑ

Շերամաբուծութիւնը Դուբայի օրջանում

Դուբա, 11 մայիսի

Նիւզէդդինում և Միւշիւրի մի քանի գիւղերում պարապում են մեծաքսի պարասատութեամբ. մինիայն Նիւզէդդինից ստացվում է 100-ից աւելի պուդ մեծաքս, իսկ այլ գիւղերի արտադրածը հասնում է հազարաւոր պուդերի. այդ պարապմունքն էլ օգտաւէտ է, քանի որ մեծաքսի ֆունտը այստեղ գնահատվում է 3 ր., իսկ պուդը 120 ր., որը տալիս է եկամուտ չքաւոր գիւղացիներին։ Սերմացուները բերում են Նուխուց։ Մ. Սալամբէգեան

Անձրեւային եղանակ

Խանքենդ, 7 մայիսի

Ահա մի շաբաթ է, ինչ անձրև է գալիս մեզանում։ Երկար երաշտից յետոյ անձրևը պէտք է որ բարերար ազդեցութիւն ունենայ բուսականութեան համար. գիւղացիների ասելով անձրևը սարերումն է օգուտ. դաշտային տեղերում երկար անձրև գալը գուցէ վնաս պատճառէ։ Առ այժմ մեզանում գարնանացանը աղում բերք է խոստանում։ Խոտի մասին դեռ վաղաժամ է կարծիք յայտնելը. չոր խոտի պուդը 40 – 50 կոպէկ է ծախվում։ Ա. Ա.

Տեսչի այցելութիւն

Գօրիս, 9 մայիսի

Երևանի թեմական տեսուչ Թ. Խզալեանը ժամանել և պատում է զբաղող ունեցող հայ գիւղերը։ Թ. Խզալեանը այցելել է Քարաքուշնջ, և ներկայութեամբ Գօրիսի ծխական դպրոցի ուսուցիչների տեղի է ունեցել երկու փորձնական դաս։ Ամսիս 7-ին տեսուչը ճանապարհվեց Քարաշէն և ապա Խնձորեսկ գիւղերը։ Փորձնական դասեր լինելու են նաև Գօրիսում։ Ինչպէս յայտնեց մեզ Խզալեանը, Դափանի շրջանի դպրոցները այցելելուց յետոյ, Տաթևով անցնելու է Սիսիան և ապա Նախիջևանի վրայով Երևան։

Զանգեզուրը, իբրև ամենահեռու վիճակ և հաղորդակցութիւնից զուրկ շրջան, պէտք է ունենայ իր շրջանային տեսուչը, որը հնարաւորութիւն ունենայ առնուազն տարեկան մի քանի անգամ մտնել միևնոյն դպրոցը. այլապէս մենք մեղադրել չենք կարող հարիւրաւոր վերստեր հեռաւորութիւն ունեցող շրջանի տեսչին, որ նա տարեկան մի անգամ է միայն կարողանում այցելել մեր դպրոցները։

Ներկայ ուսումնական տարում Տաթևի վիճակի դպրոցների թիւը հասնում է 22-ի, որոնցից բոլորն էլ ունեն դպրոցական տեսչական շէնք, բացի Գօրիս քաղաքը և գիւղը. այդ էլ շնորհիւ այն առանձնայատկութեան, որ Գօրիսը և նրան կպած գիւղը — իրար լաւ են հասկանում։ Գօրիսին պակասում է դպրոցական լաւ շէնք։

Սաղանդարեան

Թեմական տեսչի այցը

Դիլիջան, 5 մայիսի

Ամսիս 2-ին տեղիս ծխական երկդասեան դպրոցն այցելեց Վրաստանի և Իմիրէթի թեմի թեմական տեսուչ Յովհ. Տէր-Միրաքեան։

Այստեղ մնաց երկու օր։ Սաներին հարցաքննեց գրեթէ բոլոր առարկաներից և բաժանմունքներում, դասեր և մնաց գոհ։

Մանրամասնին նայեց լեզուների և թւաբանութեան տարերը և ընդհանրապէս գոհունակութիւն յայտնեց։

Երրորդ օրը այցելեց նոյնպէս և Պողոս-Քիլիսա գիւղի դպրոցը։ Avsir

ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ 50-ԱՄԵԱԿԸ

Սիմֆերոպոլ, 6 մայիսի

Ամսիս 5-ին տեղիս հայ-կաթոլիկ համայնքը շքեղօրէն ոտնեց իր եկեղեցու 50-ամեակը։

Հանդէսին մասնակցելու համար եկել էին Ղրիմի քաղաքներից — Ղարասու-Բազարի, Թէոդոսիայի և Եւպատորիայի — վարդապետներ։ Նաև Վենետիկից յատկապէս այդ ոտնի առիթով եկած էին երկու վարդապետներ, որոնցից մէնը՝ Սիմֆերոպոլի հայ-կաթոլիկ համայնքի նախկին հովիւ հ. Յովսէփն էր, որը մօտ 17 տարի հովուութիւն է արել այստեղ և լաւ հովուի համբաւ թողել...

Եկեղեցին գրաւել էր ժողովրդի հոծ բազմութիւն. բացի հայ լուսաւորչականներից կային նաև շատ օտարազգիներ։ Եկեղեցում կանգնելու տեղ չը լինելու պատճառով, շատերը կանգնած էին դրան մօտ և փողոցի հրապարակի վրա։

Տաճարի դուռը զարդարված էր դրօշակներով, իսկ տեղանը՝ գեղեցիկ թարմ կանաչներով։ Պատարագին երգում էր քառաձայն երկսեռ խումբը երգեհոնի դաշնակցութեամբ և մեծ տպաւորութիւն թողեց ունկնդիրների վրա։ Պատարագիչն էր՝ տեղական հայ կաթոլիկ ժողովրդի հովիւ հ. Համազասպը, որը և կարդաց առաքելական կառավարիչ գեր. Սարգիս վարդապետի՝ ժողովրդին ուղղած օրհնաբանական գիրը։

Ժամասացութիւնից յետոյ հանդիսականները հաւաքվեցին եկ. ծխ. ուսումնարանի դահլիճը, որտեղ պատրաստված էր ճոխ սեղան։

Հրաւիրված էին և մէջի այլոց տեղիս հայ-լուսաւորչական ուսուցչ. խումբը և ծխատէր քահանան։

Պէտք է ասած, որ տեղիս հայ-կաթոլիկ համայնքը աւելի համերաշխ է գործում և իր սրտին մօտ է պահում հասարակական հիմնարկութիւնները և ամեն կերպ աշխատում է նրանց ծաղկեցնել։ Այս վերաբերելու է նրա ինտելիգենտ անդամներին, որոնք իբրև հայանքի անդամ պարտաճանաչ են և չեն խուսափում հասարակական գործերից, այլ ընդհակառակն եռանդուն և աշխուժով մասնակցութիւն են ցոյց տալիս։ Սիմ. Գրիգեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Բագում անյայտ չարագործներ սպանել են Բենկենդորֆ նաւթարդիւնաբերող ֆիրմայի խժեները Ֆրանսիացի երկրաբան Գաուավիրտին, որին ընդունել են ուրիշի տեղ, որի դէմ և ուղղված է եղել սպանութիւնը։ Կարևոր քննիչի կարգադրութեամբ կալանաւորված է Բերբալայ Սէյդ-Ադամօղլին, որի մօտ գտնվել է հանդուցեալ ինժենիրի հեռադիտակը։

◆ Թիֆլիսի քաղ. դուման իր վերջին նիստում հաւանութիւն տուեց քաղ. վարչութեան առաջարկութեանը՝ կնքելու 400,000 ռուբլու փոխառութիւն Աւճաման Ջրանցքը բարեկարգելու մեջացների համար։

◆ Գրական-Գեղագիտական Սալոնի առաջիկայ երեկոյթը, որ տեղի կունենայ վաղը, ուրբաթ, մայիսի 17-ին, հրաւիրված կը լինի հայ և օտար գեղարուեստագէտների պատուին և յիշատակին։ Բանախօսութիւններ կը լինեն 1) նշանաւոր երաժշտագէտ Բիթարդ Վագների մասին, որի ծննդեան 100-ամեակը լրացաւ ներկայ մայիսին, 2) թիւրքական բանաստեղծ և կրթական գործիչ Յովհ. Սեթեանի մասին, որի հասարակական 40-ամեակը բոլորեց այս տարի, 3) ժողովրդական բանաստեղծ աշուղ Շահիր Խաչատուրի մասին՝ նրա գործունէութեան 50-ամեակի առիթով, 4) եաղօնական թատրոնի և դրամատիական գրականութեան մասին՝ եաղօնական ներկայացումների առիթով, 5) հայ ժողովրդական երգիչների մասին և 6) հայ նկարչութեան գործողների մասին։ Սկիզբն է ժ. 8½-ին երեկոյեան։

◆ Մեզ հաղորդում են հետեւեալը։ Հասարակութեան բուռն ցանկութեան ընդառաջ գնալով, Հայ Գրողների Ընկերութեան վարչութիւնը որոշել է կրկնել Սայաթ-Նովայի յիշատակին նուիրված երեկոյթը, որ կայացաւ ապրիլի 5-ին արտակարգ աջողութեամբ։ Երեկոյթը կրկնվելու է առաջիկայ շաբաթ, մայիսի 18-ին, երեկոյեան՝ ժողովարանի ճմերային դահլիճում։ Տոմսակներ կարելի է ստանալ ժողովարանի շվեյցարի մօտ և Ե. Ծատուրեանի մագազինում։

◆ Երէկվանից Թիֆլիսի շերամապահական կայարանին կից բացվեցին ամարային շերամապահական դասընթացքներ ժողովրդական ուսուցիչների և գիւղատնտեսների համար։ Դասընթացքները տևելու են մինչև յունիսի 15-ը։

◆ Արդէն երկու ամսով արտասահման են մեկնել Թիֆլիսի քաղ. վարչութեան անդամներ իշխաններ Ա. Մ. և Ն. Ե. Արղութեան-Երևայնաբաղուկները, որոնց պարտականութիւնները իրար միջև բաժանել են քաղաքագլուխ Խատիսեան և վարչութեան մէջ անդամները՝ Մ. Աթաբէկեան և Ժուրուլի։

◆ Այսօր, ժողովրդական Տանը, ժողովրդական ներկայացումներ կազմակերպող հայկական սեկցիա ներկայացնում է Միքայէլ Պատկանեանի «Մէջի մարդ» 4 գործ. կոմեդիան և «Խեղճ տղայ» վոդեվիլը։ Ներկայացման օգուտը յատկացվելու է սեկցիայի գործավար Գ. Փիրումեանին։ Տեղերի գները սովորական են։ Գ. Փիրումեան սեկցիայի եռանդուն աշխատողներից մէկն է և ամբողջ սեաշխատանքը նա է կատարում, ուստի սպասելի է, որ հասարակութիւնը կը գնահատէ Գ. Փիրումեանին ու կը յարգէ նրան իր ներկայութեամբ։

◆ Հարկաւոր ենք համարում յայտնել, որ Հայոց Ազգագր. Ընկ. մէջ ամսիս 13-ին կայացած Ց. Բեդելեանի դասախօսութիւնը եղել էր Ընկերութեան յատուկ հրաւէրով, իբրև հրապարակային նիստ։

◆ Երեքշաբթի, մայիսի 14-ին, երեկոյեան կայացաւ Կ. Հ. Բ. Ընկ. անդամների ընդհանուր ժողովը, մասնակցութեամբ 40 անդամների, նախագահութեամբ բժշկ. Բ. Նաւասարդեանի և քարտուղարութեամբ Ս. Աբրահամի։ Ժողովը քննեց Ընկ. 1912 թ. հաշիւները, մի քանի ճիզերի նախահաշիւները և հաստատեց։ Ապա քննվեց որբանոցի հարցը, որ չաւարտվեց։ Այդ հարցի քննութիւնը և ընտրութիւնները յետաձգվեցին ժողովի շարունակութեան, որ նշանակված է շաբաթ օր։ Մանրամասն հաշիւը կը տանք յետոյ։

◆ Թոքերի տուբերկուլոզով հիւանդ մի ռուս երեխայ, որ սովորում է քաղաքային դպրոցներից մէկում և ապրում է իր աղքատ մօրաքրոջ մօտ, խնդրում է բարեբարեներին ըստ չափու կարողութեան նպաստել իրան դրամով, որպէս զի կարող լինի գնել մէջակ սնունդ ստանալ՝ իրան հիւծող հիւանդութեան զարգացմանը դիմադրելու համար։ Հանգանակութեան համար երեխան ունի թոյլատրութեան թուղթ Թիֆլիսի նահանգապետից։ Նպաստը կարելի է ուղարկել «Մշակի» գրասենեակին՝ հասցնելու ըստ պատկանելոյն։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչի ընկերութեան լիազօրների ընդհանուր ժողովը կայացաւ մայիսի 14-ին։ Ժողովը պէտք է ընտրէր ընկերութեան կառավարիչ՝ հրաժարեալ Ղամբարեանի տեղ։ Ժողովը 37 ձայնով ընդդէմ 24-ի որոշեց յետաձգել ընտրութիւնը մինչև նոյեմբեր ամիսը։

◆ Հայ Գրական Ընկ. այսօրվայ հերթական երեկոյթին տեղի կունենան վիճաբանութիւններ՝ անցեալ երեկոյթին Մատէնճեանի արծարծած հարցերի շուրջը։ Կը խօսեն գլխաւորապէս հետեւեալ հարցերի մասին. ա) որն է ազգային բանաստեղծութիւնը, բ) Դամառ-Քաթիպա՞ն է արդեօք հայ ազգի բանաստեղծութեան հիմնադիրը, գ) լեզուի խնդիրը։ Սկիզբն է ժ. 8-ին։

◆ Թիֆլիսի «Ռուսաց ակումբի» անդամների ընդհանուր ժողովը որոշել է գնել 150,000 ռուբլով այն շէնութիւնը, որի մէջ ներկայումս գտնվում է ակումբը։ Շէնութիւնը պատկանում է ալէքսանդրոպոլցի Զեթողցեանի ժառանգներին։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մայիսի 13-ին, երեկ. ժ. 6-ին, Վօրոնցովի արձանի մօտ Աբրամ Դիմիտրիչ Վիլլն իր սայլակով ատում էր ծանր երկաթներ կայարանից դէպի Արմանսկի բազարը։ Ցիշեալ տեղում ու յիշեալ ժամին գիմացից Միքայէլեան փողոցն էր դիմում հեծանիւով գլնոր Պիտէն Բուդագան, որ շրջելիս անզգուշութիւնից կպաւ երկաթներին և ապա իր հեծանիւով ընկաւ սայլակի տակ։ Սրա անիւները անցան նրա վրայով և իսկոյն նրա ուղղը փշրվեց։ Անդգայ վիճակում նրան տարան հիւանդանոց, բայց ուշքի չը գալով մեռաւ։ Տեղական քաղաքամասի պրիստաւը կալանաւորել է Դիմիտրիչվիլին։

◆ Մայիսի 13-ին 17 տարեկան Սիմկինան (սպասուհի) Վօլնայա փող. № 6 տանը անդգուշութիւնից խմեց քացախի էսէնցիա։ Թունաւորվածի կեանքին վտանգ չէ սպառնում։

◆ Մայիսի 13-ին գերմանահպատակ Ալվինա Բարօնը իր արբած ամուսնուն զարթեցնելու ժամանակ ենթարկվեց վերջինիս յարձակման, որ պատառաքաղով մի քանի վէրքեր հասցրեց կնոջը։ Վէրքերը վտանգաւոր չեն։

✦ Մայիսի 14-ին, երեկ. ժամը 5-ին, Գոնչարնայա փող. № 4 տանը 21 տարեկան Մարիա Վարշավսկայան ինքնասպանութեան նպատակով խմեց կօրբոլեան թթուտ. նրան անզգայ վիճակում տարան հիւանդանոց, ուր և շուտով մեռաւ։ Պատճառը կանոնոց, ուր և շուտով մեռաւ։ Պատճառը կանոնոց, ուր և շուտով մեռաւ։ Պատճառը կանոն